ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների նիստ

ք. Երևան 19 ապրիլի 2018թ. Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Բաղդասարյան

1. Ընդունել ի գիտություն, որ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի Արձանագրություն 2-ի 6.8-րդ կետով որոշում էր կայացվել N 9-րդ և 10-րդ («Վանկոմպ» ՍՊԸ), 24-րդ («Վարմէքս» ՍՊԸ) չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցներին հրավիրել առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների: Մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Գնահատող հանձնաժողովի անդամները քննարկեցին վերը նշված հանգամանքը և կայացրեցին որոշում՝

1.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ N 9, 10 և 24-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին, որպեսզի վերջիններս հրավերով սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնեն իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն հրավերով նախատեսված հավելված N 6 և հավելված N 6.1-ի:

1.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը և ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացված հարցման պատասխանը ստանալուց հետո:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
	_____	Թ. Զաքարյան
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Լ. Բաղդասարյան